

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչության և Ուկրաինայի նախարարների կաբինետին առընթեր գլխավոր արխիվային վարչության միջև արխիվային գործի բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչությունը և Ուկրաինայի նախարարների կաբինետին առընթեր գլխավոր արխիվային վարչությունը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով իրենց երկրների միջև արխիվային գործի բնագավառում համագործակցության զարգացման անհրաժեշտությունից,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը սույն Համաձայնագրին, իրենց երկրների ներքին օրենսդրությանը և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան կզարգացնեն համագործակցությունը փոխադարձության հիման վրա:

Հոդված 2

Կողմերը կզարգացնեն փորձի փոխանակումը պետական արխիվների գործունեության իրենց հետաքրքրող բոլոր ուղղություններով:

Այդ նպատակով Կողմերը կփոխանակեն տեղեկություն արխիվային գործում իրենց մոտ ծագած խնդիրների վերաբերյալ և փոխադարձության հիմքով կիրականացնեն արխիվագետ մասնագետների ստաժավորում՝ նրանց տրամադրելով իրենց ուսումնասիրությունների թեմաներին վերաբերող բոլոր հրատարակված և չհրատարակված արխիվային փաստաթղթերը:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմին կփոխանցի տեղեկատու նյութերի ցուցակները:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել մյուս Կողմին իրեն հետաքրքրող տեղեկություն ստանալու համար:

Տրամադրվող տեղեկությունը չպետք է հակասի այն տրամադրող Կողմի պետական շահերին:

Հոդված 4

Կողմերը հատուկ ուշադրության կդարձնեն քաղաքացիների և հիմնարկների սոցիալ-իրավական բնույթի հարցումների բավարարման համար անհրաժեշտ տեղեկանքների տրամադրմանը:

Կողմերը համաձայնում են, որ առաջին հերթին անհրաժեշտ է իրականացնել բռնաճնշման ենթարկված այն անձանց հարցումներին ի պատասխան փաստաթղթերի որոնումը, որոնք տուժել են ամբողջատիրական վարչակարգից: Նման հարցումներին պետք է պատասխանել արագ և անվճար:

Հոդված 5

Կողմերի ֆոնդերը Հայաստանի և Ուկրաինայի պատմության վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերով հարստացնելու նպատակով Կողմերը միմյանց կտրամադրեն արխիվային փաստաթղթերի պատճենները:

Հիշյալ փաստաթղթերի հայտնաբերումը, պատճենահանումը և պատճենների փոխանակումը համապատասխան արխիվային հիմնարկների միջև պայմանավորվածությամբ կարող են իրականացվել անվճար՝ համարժեքության հիմունքով: Մնացած դեպքերում Կողմերի պետական արխիվների ֆոնդերը համալրելու նպատակով պատճենների տրամադրման համար հաշվարկները կիրականացվեն արտոնյալ պայմաններով, առանց պատճենահանման համար փաստաթղթերի պատրաստման և տրամադրման դիմաց վճարը հաշվառելու՝ պատճենահանման նյութերի փաստացի ծախսերի հատուցմամբ՝ համաձայն գործող գնացուցակների, ինչպես նաև Կողմերի համար ընդունելի պայմանագրային գների:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերի արխիվային ֆոնդերում ոչ պրոֆիլային փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում Կողմերը բանակցությունների միջոցով և յուրաքանչյուր երկրի օրենսդրությանը համապատասխան կլուծեն այդ փաստաթղթերի ըստ պատկանելության փոխանցելու հարցը:

Հոդված 7

Կողմերը կիրականացնեն արխիվային փաստաթղթերի համատեղ հրապարակումներ և կկազմակերպեն համաձայնեցված թեմատիկայով փաստաթղթերի ցուցահանդեսներ:

Հոդված 8

Կողմերը կփոխանակեն արխիվային հիմնարկների աշխատանքային հարցերը կանոնակարգող օրենսդրական և այլ նորմատիվ ակտեր, ինչպես նաև արխիվային գործի վերաբերյալ արխիվագիտական, գիտամեթոդական գրականություն (աշխատանքի կանոններ, գիտական աշխատություններ, հոդվածներ, կոնֆերանսների ու սեմինարների նյութեր և այլն) և Կողմերի արխիվային հիմնարկների կողմից հրատարակված արխիվային փաստաթղթեր:

Հոդված 9

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են փոփոխություններ և լրացումներ կատարել սույն Համաձայնագրում, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Վերոհիշյալ արձանագրություններն ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի համաձայն:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի մեկնաբանման հետ կապված տարաձայնությունները Կողմերի միջև կլուծվեն բանակցությունների միջոցով:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը չի խոչընդոտի արխիվային գործի բնագավառում Կողմերի այլ մասնագիտացված շփումներին:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման մասին միմյանց ծանուցելու օրվանից և կգործի 5 տարվա ընթացքում: Այն ինքնաբերաբար կերկարաձգվի ևս 5 տարով, եթե Կողմերից ոչ մեկը Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չհայտնի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Կին քաղաքում 1997 թվականի հուլիսի 22-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Կողմերի միջև սույն Համաձայնագրի տեքստի մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 16-ից: